անկաւ 'ի վայր ։ Դաւիթ եպիսկոպոս որդի Յովհաննիսի Պատրիարքն Հայոց կամեցաւ շինել և նորոգել զայն ըստ առաջին կերպի ․ սակայն փոխանորդն Ղեւոնդի և Տեառն Վրաց Պուզանի ընդդէմ կացեալ արգելին զնա 'ի գործոյն ․ պատճառելով թէ տեղին այն ընկերութեամբ է քրիստոնէից, և ոչ միոյ ազգի սեփհական ։ Իսկ Դաւիթ եպիսկոպոս յանձն առեալ զաշխատութիւնս եւ զծախս, կացոյց վկայս յայլազգեաց և 'ի քրիստոնէից, և հաստատեաց զտեղին լինել սեփհական ազգին Հայոց միայն, և 'ի բաց մերժեալ զբանս ստախաց իւրոց, շինեալ հաստատեաց զկամարն զայն ։ Շինեաց նաեւ զորմն անջրպետ 'ի մէջ Գողգոթայի տանեաց և վերնատան մերոյ, ուր է այժմ սեղանատունն, թէպէտ Յոյնք բազում աշխատ եղեն խափանել զայն, այլ ոչ կարացին ․ 'ի է Մաւհարրէմ ամսոյ՝ ՌԽ (1591) ։

Ի սմին ժամանակի վանք Ս ․ Յակոբայ անկեալ 'ի ներքոյ պարտուց, և միաբանք նորին տառապէին 'ի չքաւորութեան և յաղքատութեան ․ եւ 'ի նեղել յայլազգեաց՝ դիմեցին 'ի վանս Լատինաց, և առին 'ի նոցանէ պարտեօք դրամս, եդեալ 'ի գրաւի զբանալի այրին Ծննդեան Քրիստոսի, և զկնի ժամանակաց իբրեւ հատուցին զպարտս իւրեանց եւ խնդրեցին զբանալին եդեալ 'ի գրաւի, նոքա զայլ և այլ բանս պատճառանաց յօդելով ոչ կամեցան տալ զայն ․ թէպէտեւ բազմօք աշխատեցան Հայք, սակայն Լատինք խորամանկութեամբ երկարէին զվէճսն ․ և պատրողական բանիւք ջանային հաւանեցուցանել զմիտս Հայոց, որպէս զի կարասցեն զրկել յիրաւանց յայրին Ծննդեան ։ Այլ Հայք վաղ զգացեալ զմիտս նոցա, և չգտեալ հնարս յԵրուսաղէմ, մատուցին գիր աղաչանաց առ Սուլթան Ահմէտ Ա ․ Զէճէղէ կոչեցեալ ․ գրեցաւ հրովարտակ եւ պատուէր առ դատաւորն Երուսաղէմի, առնուլ զբանալին 'ի ձեռաց Լատինաց եւ տալ Հայոց, այնպէս կատարեցեալ է զխնդիրն ․ զի մի վերստին տխրեսցին Հայք բողոք բառնալ 'ի Դուռն ․ եւ կրկին հրամանի կարօտ լիցին ․ 'ի հասանել հրովարտակին յԵրուսաղէմ, էառ դատաւորն զբանալին 'ի Լատինաց և յանձն արար 'ի ձեռս միաբանիցն Հայոց ։

Աստուածատուր վարդապետ Թարգման վանից Ս ․ Յա-